ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N-4

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

08.12.2018թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան
Խորհրդի նիստին մասնակցում էին Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Պ. Ասիլբեկյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Ա. Եգանյանը, Տ. Թամրազյանը, Ս. Վարդումյանը, ուս. խորհրդի նախագահ Լ. Մադաթյանը, ՈՒԳԸ նախագահ Տ. Թիրաբյանը, Մ. Մելիքսեթյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ընդհանուր տնտեսագիտության, տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնների վարիչների ընտրություն: /Զեկ.՝ Դեկանի պաշտոնակատար՝ Գ. Ավետիսայն/
2. Ընդհանուր տնտեսագիտության, տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնների վարիչների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունները կատարված ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին: /Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/
3. Ընթացիկ հարցեր:

Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն հաստատվեց նիստի օրակարգը:

1. Լսեցին.-Ֆակուլտետի ընդհանուր տնտեսագիտության, տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնների վարիչների ընտրության մասին Գ. Ավետիսյանի զեկուցումը:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը: Նա նշեց, որ տուրիզմի կառավարում և մշակութաբանություն ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի տեղակալման համար դիմող չի եղել: Հայտնեց, որ ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման համար դիմել է միայն մեկ հոգի՝ նույն ամբիոնի վարիչի պաշտոնակատար տ.գ.դ., պրոֆեսոր Մ. Միքայելյանը: Նա նշեց, որ նախապես ֆակուլտետի գիտխորհրդի կողմից կազմվել է մրցութային հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

- Պ. Ասիլբեկյան /նախագահ/
- Ա. Ուլիխանյան

- Ա. Սարիբեկյան
- Ա. Ալեքսանյան

Հանձնաժողովը ուսումնասիրել է դիմողի ներկայացրած փաստաթղթերը և տվել դրական եզրակացություն: Պ. Ասիլբեկյանը ներկայացրեց ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի կարծիքը /կցվում է/:

Արտահայտվեցին.-Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Մ.Միքայելյանը: Մ.Միքայելյանը նշեց, որ ամբիոնի վարիչ ընտրվելու դեպքում իր բազմամյա գիտամանկավարժական և պետական կառավարման համակարգում աշխատանքային փորձը առաջիկա 5 տարիների ընթացքում կկիրառի ամբիոնի գործունեությունը ղեկավարելիս: Նա ներկայացրեց Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի աշխատանքների կազմակերպման իր տեսլականը, որը ծավալվելու է հետևյալ ուղղություններով.

1. Կրթության և դասավանդման որակի բարձրացում:
2. Գիտահետազոտական աշխատանքների ակտիվացում:
3. Ամբիոնի դասախոսների մասնակցության խթանումը հայաստանյան և արտասահմանյան գիտական դրամաշնորհային մրցույթներին:
4. Մագիստրոսական ծրագրի մշակում:
5. Վճարովի հիմունքներով մարզի տնտեսավարող սուբյեկտներին խորհրդատվական աշխատանքների կատարում, հաշվապահական դասընթացների կազմակերպում /կցվում է/:

Հարց.-Ա. Ուլիխանյան. Ինչպես եք պատրաստվում իրականացնել ինքնուրույն աշխատանքների վերահսկողությունը:
Պատասխան.-Մ. Միքայելյան. ինքնուրույն աշխատանքների վերհսկման մեթոդներից մեկը սեմինար պարապմունքների ընթացքում համապատասխան պրոբլեմների շուջ քննարկումների կազմակերպումն է:
Հարց.-Գ. Հովհաննիսյան. Ինչ դժվարություն եք տեսում աշխատանքի կազմակերպման գործընթացում:
Պատասխան.-Մ. Միքայելյան. միակ դժվարությունը ֆինանսավորումն է:

Արտահայտվեցին.-Գ.Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը.
նրանք շեշտեցին, որ Մ. Միքայելյանը օժտված է մասնագիտական բարձր որակներով, պատասխանատվության զգացողությամբ, պարտաճանաչությամբ և սկզբունքայնությամբ: Հույս հայտնեցին, որ նա կբարելավի ամբիոնի աշխատանքը, կյանքի կկոչի նոր ծրագրեր, կընդլայնի միջամբիոնային կապերը:

Ընտրությունը կազմակերպելու համար Գ. Ավետիսյանն առաջարկեց ձևավորել երեք անձից բաղկացած հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝ Լ. Մադաթյան /նախագահ/, Ա. Ալեքսանյան /քարտուղար/, Ա. Եգանյան /անդամ/:

Տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն: Քվեարկության արդյունքներով /միաձայն/ ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ ընտրվեց Մ. Միքայելյանը /կցվում է հաշվիչ հանձնաժողովի նիստի արձանագրությունը/:

Որոշեցին.–

ա/ հաստատել հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը,

բ/ Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման *մրցույթի արդյունքներով այդ պաշտոնում տ.գ.դ., պրոֆեսոր Մ.Վ.Միքայելյանի ընտրվելու վերաբերյալ գիտական խորհրդի նիստի արձանագրության քաղվածքը ներկայացնել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը:*

2. Լսեցին .-*Մ. Միքայելյանի, Գ. Հովհաննիսյանի հաշվետվությունները ընդհանուր տնտեսագիտության ու տուրիզմի և մշակութաբանության ամբիոնների 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի գործունեության մասին:*

Մ. Միքայելյանը ներկայացրեց 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակում ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դասախոսների գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների արդյունքները: Ամբիոնի դասախոսները հանրապետության գիտական պարբերականներում հրատարակել են յոթ գիտական հոդված: Ամբիոնի ասիստենտ Գ. Ավետիսյանը նշանակվել է դոցենտի պաշտոնում, իսկ դասախոսներ Ա. Սարիբեկյանը և Ա. Ալեքսանյանը՝ ասիստենտի պաշտոններում:

Կազմակերպվել է դասախոսություն, որը վարել է ԿԲ նախագահի տեղեկալ Ն. Երիցյանը:

Մարքեթինգի դասընթացի շրջանակներում կազմակերպվել է չորրորդ կուրսի ուսանողների այց «Բեկոն» ընկերություն:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ 2018-2019 ուս. տարվա առաջին կիսամյակում տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի դասախոսները ծավալել են գիտական և ուսումնամեթոդական գործունեություն: Ամբիոնի դասախոսների կողմից հրատարակվել են գիտական հոդվածներ տարբեր գիտական պարբերականներում: Դասախոսների կողմից ընթացիկ կիսամյակում հրատարակվել է 11 գիտական հոդված, որոնցից մեկը, որի հեղինակը Ա. Պոտոսյանն է, հրատարակվել է արտերկրում:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի դոցենտ Ա. Պոտոսյանին երկարամյա և բեղուն գիտամանկավարժական գործունեության համար նշանակվել է ԵՊՀ ԻՄ տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում:

Արտահայտվեցին.-Ա. Պոտոսյանը, Տ. Թամրազյանը.

նրանք նշեցին, որ ամբիոնների աշխատանքը գնահատելի է: Նմանատիպ ուսանողական այցեր անհրաժեշտ է կազմակերպել ավելի հաճախակի:

Որոշեցին.- ընդհանուր տնտեսագիտության, տուրիզմի և մշակութաբանության ամբիոնների 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքները գնահատել բավարար:

Գիտխորհրդի նախագահ՝ *Գ. Ավետիսյան*
Քարտուղար՝ *Ա.Ալեքսանյան*

Առաջիկա 5 տարիների ընթացքում Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի աշխատանքների կազմակերպման տեսլականը.

1. Կրթության և դասավանդման որակի բարձրացում:

Սրան կարելի է հասնել ուսումնական ծրագրերի թարմացման, նոր ծրագրերի մշակման, դասախոսների վերապատրաստման դասընթացների կազմակերպում և մասնակցություն մայր բուհում կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին: Այս աշխատանքներին կնպաստի նաև պարբերաբար դասալսումների անցկացումը, ամբիոնում առարկայական և գիտական քննարկումների անցկացումը:

2. Գիտահետազոտական աշխատանքների ակտիվացում:
   Դասավանդման որակի բարձրացմանը կնպաստի նաև գիտական կոնֆերանսների մասնակցության, գիտական հոդվածների տպագրության վերաբերյալ դասախոսների նկատմամբ պահանջների խստացումը:
3. Ամբիոնի դասախոսների մասնակցության խթանումը հայաստանյան և արտասահմանյան գիտական դրամաշնորհային մրցույթներին:
   Ամբիոնի դասախոսների գիտահետազոտական աշխատանքների կատարմանը կնպաստի հայաստանյան և արտասահմանյան գիտական դրամաշնորհային մրցույթներին նրանց մասնակցությունը: Այդ նպատակով ամբիոնի կողմից կխրախուսվեն այն մասնակիցները, որոնք իրենց գիտական հետաքրքրությունների շրջանակում տեղեկություններ կներկայացնեն այս կամ այն թեմայով դրամաշնորհային մրցույթի հայտարարման վերաբերյալ:
4. Մագիստրոսական ծրագրի մշակում և/կամ ԵՊՀ ԻՄ լավագույն ուսանողներին անվճար հիմունքներով մայր բուհում մագիստրատուրայում ուսումը շարունակելու հնարավորության ընձեռում:
5. Վճարովի հիմունքներով մարզի տնտեսավարող սուբյեկտների համար խորհրդատվական աշխատանքների կատարում, հաշվապահական դասընթացների կազմակերպում:

   Ամբիոնի գիտական պոտենցիալը կարելի է օգտագործել մարզի տնտեսավարող սուբյեկտների համար խորհրդատվական ծառայություն մատուցելու, բիզնես ծրագրեր կազմելու, բազմապրոֆիլ արտադրանքի դեպքում վնասաբեր արտադրատեսակի արտադրությունը դադարեցնելու կամ շարունակելու հիմնավորումներ մշակելու կամ գնահատելու, տեղական ինքնակառավարման մարմիններին /ներառյալ համայնքներին /զարգացման ծրագրեր կազմելու, խորհրդատվություն մատուցելու համար: